

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍՏՈՅՆՈ ԲԱՐԸՄՈՎԻՆ

(20-ը մայիսի 1975 թ., Սոֆիա)

Ձերդ Սրբություն,

Հարգարժան պրն. նախագահ Ստոյնո Բարըմով,

Շատ ուրախ ենք որ Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքի հրավերով, կգտնվինք եղբայրական Պուլկարիա և վերստին կվայելենք անկրկնելի գեղեցկությունները ձեր ծաղկազարդ երկրին ու սրտաբաց հյուրասիրությունը ձեր մեծահոգի ժողովուրդի:

Մենք խորապես զգացված ենք մեզի հանդեպ, մեր եկեղեցու հանդեպ ցույց տրված անկեղծ սիրո և ջերմ բարեկամության այս արտահայտություններից, որոնց քաղցր հիշատակը մեր սրտերում միշտ պիտի պահենք իբրև անթառամ բուրումնավետ ծաղիկներ:

Այս պահին մենք կկամենանք Մեր շնորհակալության խոսքը ուղղել ի մասնավորի պուլկար պետական իշխանությանց, որոնք այս անգամ ևս անչափ ուշադիր և բարյացակամ եղան Մեր և Մեր պատվիրակության հանդեպ, և իրենց բարձր կարգադրություններով ոչ միայն ամեն դյուրություններ ընծայեցին Մեզ, այլ նաև ամեն ինչ տնօրինեցին, որպեսզի հաճելի և շահեկան դառնա Մեր այցը Պուլկարիա:

Պարտք ենք զգում նաև այս առիթը օգտագործելու, հայտնելու համար Մեր երախտագիտությունը անձամբ Ձեզ մեծահարգ տիար Ստոյնո Բարըմով և Պուլկարիո հանրապետության այն բոլոր դյուրությունների ու ազատությունների համար որ վայելում են հայ եկեղեցին և հավատացյալները այս եղբայրական երկրին մեջ:

Երջանիկ ենք իրապես որ անգամ մը ևս պատեհություն ունեցանք մոտեն տեսնելու ձեր գեղեցիկ երկիրը, լույսով ու երգով լեցուն ձեր Սոֆիան, ձեր ստեղծագործ ժողովուրդի նորաստեղծ արժեքները և մանավանդ հսկայական նոր նվաճումները գիտության, մշակույթի, գյուղատնտեսության, ար-

դյունաբերության ու քաղաքաշինության մեջ, այս վերջին տասնամյակներին, սոցիալիստական իշխանության տարիներին: Առանց վարանումի կարելի է ասել, թե Պուլկարիա իր բազմադարյան պատմության պայծառ վերածնունդի շրջանն է ապրում, իր պատվո տեղը գրաված լինելով մեր օրերի աշխարհում: Եվ երբ խոսում ենք այսօր Պուլկար հայրենիքի վերածնունդի մասին, չենք կարող մոռանալ, որ անա այս տարի լրանում է երեսուն տարին այն մեծ հաղթության, որը մարդկությանը բերեց փրկությունը հիտլերյան կայսերապաշտությունից և ազատագրումը բազում ազգությունների, որոնք զոհերն էին դարձած նացիզմի և ֆաշիզմի բռնակալության:

Մեզ լավ ծանոթ են պուլկար ժողովրդի ազատատենչ ոգին, նրա քաջասրտությունը, նրա հերոսական մարտնչումները, ինչպես անցյալ դարերում օսմանյան բռնակալության, այնպես և մեր դարում հիտլերյան կայսերապաշտության դեմ:

Ազատարար մեծ հաղթանակի երեսնամյակին, ոգեկոչելով պուլկար ժողովուրդի անցյալ տառապանքներն ու հերոսական պայքարները, փառք ենք տալիս ներկա օրերին, երբ խաղաղության ու անվտանգության պայմաններում ապրում է ու զարգանում, կառուցում է ու ստեղծագործում, ընկերային արդարության ու համամարդկային համերաշխության գաղափարական եղբայրացած ազատ ժողովուրդների մեծ ընտանիքում:

Մենք իբրև քրիստոնյաներ, հավատում ենք և պաշտպանում՝ ընկերային արդարության, ժողովուրդների եղբայրության ու աշխարհի խաղաղության գաղափարները, գաղափարներ, որոնք ամբողջապես հարազատ են Քրիստոսի Ավետարանի ոգուն, նույնանալու աստիճան:

Մենք աղոթում ենք անձանձրույթ կերպով, որ այդ ոգին՝ արդարության, եղբայրության ու խաղաղության, հետզհետե զորանա և ամրապնդվի, ու դառնա միջազգային հարաբերությունների գերագույն օրենք, որպեսզի աշխարհում այլևս երբեք և ոչ մի տեղ չլինեն բռնատիրություններ ու պատերազմներ, հերջանկություն բոլոր ժողովուրդներին անխտիր:

Ողջույն և օրհնություն հերոսական ազատ Պուլկարիային, ողջույն և օրհնություն մեր հարազատ եղբայր պուլկար ժողովուրդին: